ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Նախագծային ուսուցման առանձնահատկությունները պատմության դասավանդման գործընթացում

Կատարող՝ Անահիտ Մալյան

Առարկա՝ Պատմություն

Ուսումնական հաստատություն՝ Կոտայքի մարզի Մեղրաձորի Հ. Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց

ՀՐԱԶԴԱՆ 2023

Բովանդակություն

Ներածություն **3**

Գլուխ 1. Ի՞նչ է նախագծային ուսումնառությունը ----------
5

1.1 Նախագծային ուսումնառությունն ու ներառական կրթությունը ------
7

1.2 Նախագծային աշխատանքի կազմակերպման քայլաշար ----------
8

1.3 Նախագծային դասավանդում ---------- 9

Գլուխ 2. Նախագծային ուսումնառություն. նկատառումներ պատմություն առարկայի ուսումնառության համար
---------- 13

2.1 Պատմության առարկայի նախագծային ուսումնառության ռեսուրսներ
13

2.2. Նախագծային աշխատանք---------- 15

Եզրակացություն ----------
18

Օգտագործված գրականության ցանկ ----------
20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպես մանկավարժության տեսության մեջ, այնպես էլ պրակտիկայում այսօր մշտապես քննարկվում է աշակերտակենտրոն կրթադաստիարակչական գործընթացի ապահովման անհրաժեշտությունը, որպես արդյունավետ կրթադաստիարակչական գործընթացի երաշխիք: Ժամանակակից մեթոդների հիմքում աշակերտների ակտիվ մասնակցությունն է գիտելիքների ձեռքբերման գործընթացում, նրանց ստեղծագործական-քննադատական հմտությունների ձևավորումն ու զարգացումը: Ցանկացած մեթոդի կիրառություն կծառայի դրված նպատակին , եթե սովորողը հետաքրքրված է և մոտիվացված: Այստեղ տեղին է հիշել Անատոլի Գինի բնորոշումը. «Տվեք երեխային հետաքրքրասիրություն: Գիտելիքը նա կգտնի ինքը»:

Ներկայումս մեր երկրի կարևոր հարստություններից մեկը գիտական ներուժն է, որի ձևավորման գործում մեծ է նաև հանրակրթություն դերը: Աշխարհը փոխվում է մեծ արագությամբ և անկանխատեսելիորեն: Տեղեկատվությունն ու գիտելիքները ձևավորում են մեր աշխարհայացքը: Հասարակական բոլոր փոփոխությունները անդրադառնում են նաև կրթական համակարգին: Հայաստանում, ինչպես և ամբողջ աշխարհում ակնհայտ է, որ մարդիկ կարիք ունեն թիմային աշաատանքի, շարունակական կրթության, ռեսուսների ճիշտ օգտագործման: Հայաստանը լիիրավ ինտեգրվել է համընդհանուր տնտեսությանը, տարածաշրջանային քաղաքականությանը և համընդհանուր ջանքերին՝ իր քաղաքացիների կյանքի պայմանները բարելավելու և խաղաղությունը պահպանելու ու զարգացնելու նպատակով: Հայաստանի հանրակրթական դպրոցներն այսօր բախվում են մի շարք խոչընդոտների: Կրթության ոլորտի աշխատողները ամենուրեք գիտակցում են, որ դասավանդման և ուսուցման հնացած ձևերը այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ, հմտություններ, արժեքներ, որոնք անհրաժեշտ են 21-րդ դարի քաղաքացուն աշխատաշուկայում մրցունակ լինելու և բարեկեցիկ ապրելու համար:

Հետևաբար, անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումներ, ֆորմալ գիտելիքի հաղորդելուց անցում կատարել կարողունակությունների ձևավորմանը և զարգացմանը: Ուսուցչի կողմից սովորողներին հանձարարվող հետազոտական աշխատանքները նպաստում են սովորողի հետազոտական, ստեղծագործական, նախաձեռնողական, ինքնակազմակերպման, ժամանակի արդյունավետ կառավարման հմտությունների ձևավորմանը և հնարավորություն են տալիս նրան ինքնուրույն կամ մյուսների հետ համատեղ աշխատանքի շնորհիվ գործնականորեն կիրառել դասի ընթացում ձեռք բերած տեսական գիտելիքները և դրսևորել իրողությունները քննադատաբար ուսումնասիրելու, վերլուծելու, ստեղծագործական նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ: Կարևորելով ինքնուրույն հետազոտական աշխատանքների դերը սովորողի կարողունակությունների ձևավորման հարցում, անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքների՝ մեթոդապես ճիշտ կազմակերպմանը: Նշված աշխատանքների արդյունավետ կազմակերպան նպատակով բազմաթիվ ուսումնասիրություններ են իրականացվում, մշակվում են տեսական և գործնական սկզբունքներ, մեթոդներ որոնք կարող են, սկսած տարրական դպրոցից, նպաստել ակտիվ մտածող, ինքնուրույն գործող, ստեղծագործական գործունեություն ծավալող մարդու ձևավորմամբ:

Թեմայի արդիականությունը

Անառարկելի է, որ յուրաքանչյուրի կյանքում հաջողություններ գրանցելը մեծապես կախված է մասնագիտական ճիշտ ընտրությունից, գործողությունների ընթացքը ճիշտ նախագծելու,կազմակերպելու և իրականացնելու կարողություններից և հմտություններից: Ուստի անհրաժեշտ է, սովորողների մոտ ձևավորել հետագա քայլերը պլանավորելու, ձեռք բերված հաջողությունները գնահատելու և վերլուծելու հմտություններ:

Աշխարհի մաշտաբով կատարված բազմաթիվ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ժամանակից քաղաքականության, սպորտի, բիզնեսի, արվեստի առաջատարների մեծ մասն ունեն նախագծային մտածողություն: Պատահական չէ,որ այսօր ծրագրեր են մշակվում սովորողների մտածողության այս ձևի զարգացման ուղղությամբ, որն իրականացվում է ուսումնական գործունեության հատուկ տեսակի՝ նախագծային գործունեության կազմակերպան միջոցով:

Դպրոցում հանրակրթական առարկաների նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող աշակերտների հետ ուսուցիչները հաճախ տարբեր տիպի աշխատանքներ են իրականացնում: Դրանցից են առարկայական օլիմպիադաները, տարաբնույթ վիկտորինաները, ինտելեկտուալ խաղերը և այլն: Մեկ այլ ձև է աշակերտների

հետազոտական և նախագծային գործունեության կազմակերպումը: Ակնհայտ է, որ կրթական բարեփոխումների գլխավոր արդյունքն այսօր պետք է լինի դպրոցն ավարտող երիտասարդի, ինչպես իր, այնպես էլ հասարակության բարեկեցության համար անձնական պատասխանատվությունը: Այս տեսանկյունից, հատկապես նախագծային գործունեություն, ըստ մեզ, համապատասխանում է կրթության նոր խնդիրներին և կարող է դառնալ կրթության բովանդակության բարեփոխումների տարերից մեկը:

Հետազոտության նպատակը

Հետազոտական աշխատանքի հիմնախնդրի շուրջ աշխատելիս մեր նպատակն է եղել ավանդական և ժամանակակից մեթոդների համադրման ճանապարհով հետազոտել նախագծային մեթոդի կիրառման հնարավորությունները և ձևերը պատմության դասավանդման ընթացքում: Իբրև հետազոտության խնդիրներ մենք առաջադրել ենք՝

- Ուսումնասիրել մեր հետազոտական թեմայի շուրջ առկա մասնագիտական գրականությունը,
- Պարզել նախագծային գործնեության դերը պատմության դասավանդման գործընթացում. Նախագծային ուսուցման ազդեցությունը սովորողների ստեղծագործական,համագործակցային, ճանաչողական կարողությունների և արժեհամակարգի ձևավորման գործընթացում.
- Ներկայացնել պատմության դասավանդման գործընթացում նախագծերի դասավանդման հիմնական սկզբունքները, ձևերը ,քայլերը
- Կիսվել անձնական փորձառությամբ ,որը իրականացրել ենք «Պարադիգմա» կրթական հիմնադրամի և «ԿՁՆԱԿ» հիմնադրամի համագործակցությամբ իրականացված «Պատմություն #5. նախագծային ուսումնառություն» ծրագրի շրջանակներում:

Գլուխ 1

Ի՞նչ է նախագծային ուսումնառությունը

Նախագծային ուսումնառությունը (անգլ.՝ project-based learning) նոր հմտություններ զարգացնելու և գիտելիք համաստեղծելու մեթոդաբանություն է: Նախագծային ուսումնառության կարևորագույն բնութագրիչը իրական աշխարհի հետ կապ ունեցող նախագծերն են. դրանք նախագծային ուսումնառության հիմնական միջոցն են:

Նախագծային ուսումնառությունը հաճախ շփոթում են խնդրահենք (անգլ.՝ problem-based) ուսումնառության հետ : Խնդրահենք ուսումնառության դեպքում սովորողները կենտրոնանում են առանձին խնդիրներ լուծելու վրա: Կարևոր է ոչ այնքան հենց լուծումը, որքան լուծման ընթացքում կատարված աշխատանքը, ներդրված ջանքերը, գործընթացի միջոցով զարգացվող հմտություններն ու գիտելիքները, նույնիսկ եթե արդյունքում խնդիրը լուծում չի ստանում: Նախագծային ուսումնառության պարագայում, ի հավելումն խնդրային ուսուցման բնութագրիչների, կարևոր է, որ աշակերտների կողմից իրականացվող նախագծերն անպայման արդյունք ունենան: Նոր գիտելիք համաստեղծելու միջոցով ծրագրի սահմանված արդյունքին հասնելն ինքնին առանձին հմտություն է:

Նախագծային ուսումնառության մեթոդաբանությունը հիմնված է Ջոն Դյուիի (John Dewey) ՝ ուսումնառության փորձառնական փիլիսոփայության վրա : Ըստ ոլորտի հետազոտող Լեո վան Լիեռի՝ նախագծային ուսումնառության հիմքերը պետք է փնտրել կրթության գործողութահենք (action-based), փորձառութահեն (experience-based) և զգացահենք (perception-based) մոտեցումներում, որոնք սկզբնավորվել են Եվրոպայում 17-րդ դարում Յան Կոմենիուսի շնորհիվ, 19-րդ դարում Յոհան Պեստալոցցիի շնորհիվ և 20-րդ դարում Մարիա Մոնտեսսորիի շնորհիվ :

Նախագծային ուսումնառության վերաբերյալ հետազոտությունները ցույց են տվել, որ այն բարձրացնում է՝

- աշակերտների մոտիվացիան
- դասավանդման նյութի նկատմամբ հետաքրքրությունը
- մետակոգնիտիվ հմտությունները, ինչպիսիք են ինքնակարգավորումն ու ինքնավերահսկումը

Նախագծային ուսումնառությունն օգնում է աշակերտներին գործի դնել կամ գտնել իրենց հետաքրքրությունները:

Նախագծային ուսումնառության հետազոտությունները հաճախ գիտության և մաթեմատիկայի առարկաների շրջանակում են: Այնուամենայնիվ, հետազոտողներ Հերնանդեզ-Ռամոսն ու Դե Լա Պասը հետազոտել են նախագծային ուսումնառությունը նաև պատմության ուսուցման համատեքստում: Նրանք դիտարկել են մեկ դպրոցի ութերորդ դասարանի այն աշակերտներին, ովքեր պատմության վեց շաբաթյա նախագծային ուսումնառության են մասնակցել՝ պատմական ակտիվ մտածողության հմտություններ զարգացնելու նպատակով: Նախագծերի շրջանակում աշակերտները պետք է 19-րդ դարասկզբի ԱՄՆ-ի պատմության մասին փոքր վավերագրական ֆիլմեր ստեղծեին:

Հետազոտողներն ուսումնասիրել են նախագծային ուսումնառության մասնակցած և չմասնակցած աշակերտների գիտելիքները նոր թեմայի վերաբերյալ, թեման ուսումնասիրելու մոտիվացիան: Նրանք հետազոտել են աշակերտների նոր գիտելիքները ստուգող թեստերի արդյունքները, աշակերտների մոտիվացիայի վերաբերյալ հարցումների պատասխանները: Թեստերի արդյունքները ցույց են տվել, որ նախագծային ուսումնառությամբ սովորած աշակերտները զգալիորեն ավելի լավ գիտելիքներ են զարգացրել: Դրանից բացի՝ աճ է գրանցվել նաև այդ աշակերտների պատմական մտածողության հմտություններում. նրանցից շատերը կարողացել են ավելի խորը հասկանալ այն, որ պատմությունն ավելին է, քան պարզապես փաստեր ներկայացնելը:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ նախագծային ուսումնառության արդյունքների վերաբերյալ ավելի վստահ խոսելու համար կարիք կա ընտրված վերահսկվող միջամտությունների (randomized controlled trial) մեթոդաբանությամբ ավելի շատ հետազոտությունների, քանի որ մեթոդաբանությունն օգնում է առանձնացնել այն բոլոր գործոնները, որոնք կարող են և պատճառահետևանքային կապ չունենալ նախագծային ուսումնառության արդյունքների հետ:

1.1 Նախագծային ուսումնառությունն ու ներառական կրթությունը

Մի շարք հետազոտություններ ցույց են տալիս, որ նախագծային ուսումնառության մեջ ներգրավված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաները ավելի լավ են կարողանում հասնել իրենց կրթական վերջնարդյունքներին, քան դասական պայմաններում սովորող ԿԱՊԿՈՒ երեխաները : Օրինակ՝ հետազոտողներ ՄքԱրթըրը, Ֆերրետտին և Օկօլօն ուսումնասիրել են վեցերորդ դասարանում թեթև հաշմանդամություն ունեցող և չունեցող աշակերտների, որոնք նախագծային ուսումնառության շրջանակում ութ շաբաթվա ընթացքում քննել են 20-րդ դարասկզբի ներգաղթն ԱՄՆ-ում: Նրանց հետազոտությունը ցույց է տվել, որ ԿԱՊԿՈՒ երեխաներն ավելի լավ են հասկացել պատմական նյութն ու ավելի դրական կարծիք են կազմել հասարակագիտական առարկաներում ինքնուրույն աշխատանքներ իրականացնելու իրենց կարողության վերաբերյալ: Հետազոտողներ Գուվենն ու Դումանը ուսումնասիրել են նախագծային ուսումնառության արդյունավետությունը մտավոր թեթև հաշմանդամություն ունեցող յոթ երեխայի պարագայում: Պարզել են, որ նախագիծը վերջացնելուց հետո երեխաների՝ թեմայի մասին ունեցած գիտելիքը զարգացել է, իսկ նախագիծն իրականացնելու ընթացքում շարունակել են թեմայով հետաքրքրված մնալ:

Մեկ այլ հետազոտության մասնակցել են չորրորդ դասարանի քսանչորս ԿԱՊԿՈՒ աշակերտ (19 տղա, 5 աղջիկ): Աշակերտները Հունաստանի Վոլոս, Լամիա և Աթենք քաղաքների տարբեր դպրոցների ներառական դասարաններից էին: Հետազոտության նպատակը ԿԱՊԿՈՒ աշակերտների համար նախագծային ուսումնառության արդյուանվետությունը չափելն էր՝ չափելով ակադեմիական ձեռքբերումներն ու սովորելու հանդեպ տրամադրվածությունը: Քանակական և որակական չափանիշները ցույց են տվել, որ ԿԱՊԿՈՒ աշակերտներն ակադեմիական ավելի բարձր ցուցանիշներ են ունեցել նախագծային ուսումնառության շրջանակում ուսումնասիրված թեմաների դեպքում: Արդյունքներն ավելի ուշադիր զննելու արդյունքում պարզվել է, որ այդ աշակերտները տվյալ թեմաների մասին իրենց գիտելիքը զարգացրել են հիմնականում դաշտային աշխատանքների և փորձառնական ուսումնառության շնորհիվ. այդ մոտեցումները, իրենց բազմազգայական բնույթով, ավելի լավ էին բավարարում այդ երեխաների կրթական կարիքները: Առանձնապես առաջընթաց չի գրանցվել տերմինաբանությունը և դասակարգումները հիշելու հարցում, քանի որ ԿԱՊԿՈՒ աշակերտների մեծ մասն ուներ աշխատանքային հիշողության հետ կապված խնդիրներ:

1.2 Նախագծային աշխատանքի կազմակերպման քայլաշար

Կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխությունների պայմաններում մեծանում է աշակերտների ակտիվ մասնակցությունը և ինքնուրունությունը սովորելու գործընթացում: Դասավանդվող նյութի հեշտ յուրացումը աշակերտների կողմից կախված է ոչ միայն նրանց ընդունակություններից, այլև դասավանդման մեթոդներից: Արդյունավետ ուսուցում կազմակերպելու և կրթության նպատակներն իրականացնելու համար նպատակահարմար մեթոդ է հանդիսանում նախագծային ուսուցումը: Նախագծային ուսուցումը աշակերտներին թույլ է տալիս կատարել խնդրի առաջադրում, տեղեկատվության որոնում, գիտելիքների օգտագործում ըստ նշանակության, վերլուծություն, ինքնաներկայացում, ինքնակրթություն, հետազոտական և ստեղծագործական գործունեություն: Հետազոտական աշխատանքի հիմնական նպատակներն են՝

¬ Դիտելու, ուսումնասիրելու հմտությունների ձևավորում և զարգացում իրական գործունեության միջոցով

¬ Եզրակացություններ անելու նախնական կարողությունների ձևավորում:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են՝

¬ Ուսումնական այլ խնդիրների լուծում , ուսումնական նյութերի ստեղծում

¬Նախագծային թիմերի ստեղծում՝ ուշադրություն դարձնել աղջիկների և տղաների միջև աշխատանքի բաշխմանը:

Թիմաբաշխում անելիս հարկ է մեկ թիմում տարբեր արդյունքներ ունեցող աշակերտներ ներառել: Հետազոտությունները ցույց են տալիս, որ նախագծային ուսումնառության արդյունքն շատ ավելի մեծ կախում ունի խմբային աշխատանքի որակից, քան խմբում միայն համաչափ կարողությունների առկայությունից: լ

Ի դեպ , ուսումնասիրությունները ցույց են տվել,որ աղջիկները նախագծի խնդիրը կարողանում են դիտարկել ավելի լայն համատեքստում, ինչն օգնում է ապահովել նախագծի արդյունքների՝ հնարավորինս իրական համատեքստին մոտ լինելը: Քասաբը և այլք գտել էին, որ աղջիկների առաջնորդած թիմերն ավելի բարձր արդյունքներ էին ապահովում. Վազը և այլք իրենց հետազոտությամբ ցույց տվեցին, որ աղջիկները նախագծային ուսումնառության արյդունքները ևս ավելի լայն՝ անմիջական խնդրից դուրս համատեքստում են դիտում ի տարբերություն տղաների, որոնք նախագծային ուսումնառության արդյունքները դիտարկել էին հիմնականում նախագծի հետ անմիջական կապ ունեցող գիտելիքների կամ հմտությունների համատեքստում: Ի հավելումն, աղջիկները շատ ավելի մեծ ուշադրություն էին դարձրել նախագծային ուսումնառության որոշումների կայացման և էթիկական հարցերին:

Սրանք կարևոր դիտարկումներ են նախագծային ուսումնառության արդյունավետ թիմաբաշխում և դերաբաշխում իրականացնելու նկատմամբ՝ համադրելու մի կողմից անմիջական խնդիրների վրա կենտրոնանալու և մյուս կողմից՝ խնդրի համատեքստի վրա կենտրոնանալու մոտեցումները:

Նախագծային ուսումնառության կարևոր սկզբունքներից է նաև թե ինչպես է դերաբաշխումը փոխկապակցված սովորողների՝ առարկայի նկատմամբ ինքնավստահության վրա: Էսպինոզան և այլք դիտարկել են ֆիզիկա առարկայից նախագծային ուսումնառության արդյունքը աղջիկների և տղաների՝ առարկայի նկատմամաբ ինքնավստահության վրա չորս մակարդակում՝ սկզբունքային ընկալում, խնդիրների լուծում, գործնական աշխատանք և թիմային համագործակցություն: Նրանք նկատել են, որ ի տարբերություն դասական մոտեցումների, որոնք էլ ավելի են խորացնում առարկայի նկատմամբ ինքնավստահության պակասը, նախագծային ուսումնառության շնորհիվ շեշտակի նվազել կամ վերացել է, բնական գիտություններում խիստ տարածված՝ առարկայի նկատմամբ աղջիկների ցածր ինքնավստահությունը (սա ի դեպ հաճախ պատճառ է մասնավորապես ուսուցիչների և ընդհանուր առմամբ հասարակության կողմից աղջիկների թերագնահատման): Կարևոր է նշել, որ հաջողությունն արձանագրվել էր դասախոսի կողմից ավելի բալանսավորված թիմերի ու դերերի բաշխմամբ:

Ուսումնասիրված դասարաններում ոչ թե սովորողներն էին ինքնուրույն թիմեր կազմել, այլ դասախոսը՝ բալանսավորելով թիմերում անհրաժեշտ գիտելիքները, մասնակիցների համաչափ բաշխումն ըստ սեռի, տրամադրելով աջակցություն՝ թիմի ներսում դերաբաշխում կատարելիս, այնպես որ աշխատանքները ևս համաչափ բաշխվեն ըստ մարտահրավերների բարդության:

Նախագծային ուսումնառությունն ունի մի քանի կարևոր առանձնահատկություն՝

- աշակերտները հնարավորինս ինքնուրույն են. նրանք են որոշում թե ինչ քայլերի հերթականությամբ հասնեն նախագծի արդյունքին, ինքնուրույն են փորձում գտնել իրենց անհրաժեշտ պատասխանները, ինքնուրույն են որոշում, թե երբ և ում դիմեն օգնության համար
- նախագծի իրականացման ընթացքում կան խմբային անդրադարձի/միմյանց և ուսուցչից հետադարձ կապի տրամադրման փուլեր, որոնք օգնում են աշակերտներին վերլուծել և բարելավել իրենց աշխատանքը, ինչպես նաև թույլ են տալիս պարբերական պատկերացում կազմել նախագծային ուսումնառության ընթացքի վերաբերյալ
- կա հանրային լսարան, որին աշակերտները ներկայացնում են իրենց նախագծի արդյունքը:

1.3 Նախագծային դասավանդում

Տարածված է այն կարծրատիպը, որ նախագծային ուսումնառության շրջանակում ուսուցիչը հանձնարարում է նախագիծը, թողնում, որ աշակերտներն աշխատեն, և օգնում է նրանց միայն անհրաժեշտության դեպքում : Իրականում սա կարող է կիրառելի լինել միայն այն պայմաններում, երբ ուսուցիչն ու աշակերտները նախագծային ուսումնառության բավարար փորձառություն ունեն:

Նախագծային ուսուցման ոչ այդքան փորձառու ուսուցիչներին կամ դրա հետ նոր ծանոթացող աշակերտների պարագայում առհասարակ ցանկալի է, որ ուսուցիչն ավելի գործուն մասնակցություն ունենա աշակերտների կողմից նախագծերը պլանավորելու գործընթացում :

Նախագծային ուսումնառության ընթացքում անհրաժեշտ է մի քանի բան հաշվի առնել.

1. «Պարզ» նախագծերը (պահանջում են ոչ ավել քան 10 ժամ) ավելի լավ կամ ավելի վատը չեն, քան համեմատաբար բարդ նախագծերը: Ավելին, նախագծային ուսուցման փորձ չունեցող ուսուցիչներին խորհուրդ է տրվում իրականացնել պարզ նախագծեր: Նախագծեր ստեղծելու համար պարզ բանաձև գոյություն չունի: Այս դեպքում բավականին օգտակար է, երբ ուսուցիչը.

- **Առանձնացնում է դպրոցում կամ համայնքում որևէ խնդիր**, կամ դա անում են աշակերտները, և այդ առանձնացված խնդիրն է դառնում նախագիծը: Կարելի է մտածել տեղական, համայնքային խնդիրների պատմության մասին, օրինակ՝ ինչպես է պատմությունն ազդում կամ կարող ազդել համայնքի տնտեսական ներկա ակտիվության վրա: Կարելի է հետազոտել այն թեմաները, որոնք դուրս են մնում դպրոցական ծրագրից և դրանցից որևէ արդյունք ստեղծել՝ օրինակ ցուցահանդես:
- **Հիմնվում է տեղական, պետական կամ միջազգային իրադարձությունների վրա**՝ արդի նախագիծ ստեղծելու համար: Կարելի է մտածել այն մասին, թե ինչպես է պատմությունն ազդում ներկա իրադարձությունների վրա փորձելով ներկայացնել այն արվեստի միջոցով:
- **Հիմնվում է աշակերտների հետաքրքրությունների վրա**, օրինակ՝ փոփ մշակույթը, նորաձևությունը, սնունդը, սպորտը և սոցիալական մեդիան: Կամ էլ հիմնվում է նրանց կյանքում կարևոր բաների վրա, ինչպիսիք են ընտանիքը, ընկերությունը, հարաբերությունները, անհատական ինքնությունն ու աճը և, տարիքով մեծ աշակերտների դեպքում, իրենց ապագան: Կարելի է մտածել, թե ինչպես է պատմությունն այդ ամենի հետ կապվում, օրինակ՝ ինչպես են տվյալ աշխարհագրական տարածքում պատմական սովորություններն ազդում ժամանակակից սնունդի վրա, կամ օրինակ ինչպես է նորաձևությունը կապվում հասարակական արժեքների հետ:

2. Նախագիծը պետք է ունենա ուսումնառության երկու տեսակի նպատակ.
    - Առանցքային գիտելիք և ընկալում,
    - Հաջողության առանցքային հմտություններ:
3. Նախագծի ընթացքում ստեղծված արդյունքը աշակերտների համար միջոց է իրենց սովորածը ցույց տալու և քննարկելու: Ծնողներն ու համայնքի անդամները հենց դա են տեսնում. դրանք հանդիսատեսի տեսանկյունից են արժեքավոր: Հետևաբար նախագիծը մշակելիս կարևոր է հնարավոր արդյունքները հաշվի առնել և ընտրել: Արդյունքն ընտրելիս կարելի է մտածել հետևյալի մասին.
    - Արդյո՞ք տվյալ արդյունքը բավարար է իմանալու, որ աշակերտները հասել են նախատեսված կրթական վերջնարդյունքներին, թե՞ մի քանի տարբեր արդյունք է պետք,
    - Արդյո՞ք բոլոր աշակերտների ոչ կարծրատիպային և չհիերախիզացվող մասնակցությունը հնարավոր է տեսնել, հատկապես ԿԱՊԿՈՒ երեխաներինը՝ ներառական դասարաններում,

- Ինչքանո՞վ է արդյունքը մոտիկ «իրական աշխարհում» ստեղծվող լուծումներին,
- Հնարավո՞ր է հասնել այդ արդյունքին՝ հաշվի առնելով այն, թե ինչ կարող են անել աշակերտները և ժամանակի, ռեսուրսի ու փորձի սահմանափակումները,
- Աշակերտների բոլոր խմբերը պիտի նույն արդյունքը ստեղծե՞ն, թե՞ տարբեր բաներ պիտի ստեղծեն:

4. Նախագծի հիմնական հարցը աշակերտներին հասկանալի լեզվով է ներկայացնում նախագծի հիմքում ընկած բարդ խնդիրը: Այն աշակերտներին հիշեցնում է նախագծի նպատակների մասին: Աշակերտների համար հետաքրքիր լինելու համար հիմնական հարցը պետք է.
    - Աշակերտների համար հասկանալի լինի,
    - Համապատասխանի աշակերտների տարիքին, դեմոգրաֆիական համատեքստին, համայնքին, և այլն,
    - Պահանջի աշակերտների խմբից կատարվող շարունակական հետազոտություն և համատեղ գործողություններ, որպեսզի ստանա ոչ պարզ պատասխան,
5. Անհրաժեշտ է օգնել աշակերտներին թիմեր ստեղծել: Թիմային աշխատանքի փորձ չունեցող աշակերտները կարիք ունեն միմյանց ավելի լավ ճանաչելու: Կարևոր է կազմել հնարավորինս համարժեք հմտություններ ունեցող թիմեր, ունենալ և՛ տղա, և՛ աղջիկ առաջնորդներ, բաշխել դերերն այնպես, որ դրանք արձագանքեն առկա կարծրատիպերին, ինչը թույլ կտա բոլոր աշակերտներին համագործակցության և մրցակցային առողջ, համարժեք պայմաններում գործել: Դրա համար կարելի է.
    - աշակերտներին խնդրել թիմում պատմել իրենց ուժեղ կողմերի մասին,
    - ըստ աշակերտների ուժեղ կողմերի՝ տարբեր ոչ կարծրատիպային դերեր բաշխել,
    - հարցնել աշակերտներին՝ արդյոք դերային բաշխումը գոհացնում է իրենց, և, եթե ոչ, քննարկել, թե ինչպես կարելի է դերերը փոփոխել՝ շարունակելով հաշվի առնել իրենց ուժեղ կողմերը:

Բարդ նախագծերի պարագայում օգտակար է կիրառել նախագծերի համակարգման (project management) գործիքներ, որ բոլոր աշակերտները պատկերացնեն և կառուցեն իրենց խմբի աշխատանքն ավելի համակարգված կերպով: Սովորողի դերը նախագծային աշխատանքում էապես տարբերվում է: Պասիվ լսողից նա դառնում է ակտիվ մասնակից, հետազոտող, գործունեություն ծավալող: Նա ազատ է գործունեության ձևի ու տեսակի մեջ: Տարրական դասարանում սովորողի համար այս մեթոդը թերևս նաև անհատական առանձնահատկություններ բացահայտելու լավագույն խթան է, սկիզբ: Նախագծի

առանձնահատկություններից մեկն էլ աշխատանքի նախնական պլանավորումն է: Ամբողջ ընթացքը՝սկսած ծագած խնդիրներից մինչև նախագծի նպատակը,անհրաժեշտ է բաժանել առանձին փուլերի յուրաքանչյուրի համար իրենց ժամանակավոր խնդիրներով,պարզել այդ խնդիրների լուծման միջոցները և դրա համար ռեսուրսներ գտնել աշխատանքի համար մանրամասն աղյուսակ կազմել,որտեղ նշված լինի յուրաքանչյուր փուլի իրականացման ժամանակը:

Նախագծային աշխատանքի պլանի իրականացումը,որպես կանոն,կապված է գրականության և տեղեկատվության ընտրության հետ:Հնարավոր է նաև կապված է տարբեր փորձերի անցկացման,գիտափորձերի,դիտումների,հետազոտությունների, հարցումների,ստացված տվյալների, եզրակացությունների ձևավորման և դրա հիման վրա ձևավորած սեփական տեսակետի հետ: Նախագծի խնդրի լուծման և գտնված լուծման մարմնավորման համար ստեղծվում է նախագծային արտադրանք: Նախագծային արտադրանքը պետք է ունենա պարզորոշ սպառողական հատկություններ,որոնք էլ բավարարեն խնդրի հանդիպած ցանկացած մարդու պահանջները,որի լուծմանը հենց ուղղված էր տվյալ նախագիծը:

Նախագծային ուսումնառության ժամաքանակ

Ըստ տարբեր հետազոտությունների՝ նախագծային ուսումնառության համար արդյունավետ են համարվում տարբեր ժամաքանակներ. պարզ նախագծերի պարագայում 5 ժամից մինչ 8 ժամ , բարդ նախագծերի պարագայում՝ շաբաթներ: Նույն կերպ՝ նախագծային ուսումնառության պարագայում որոշ հետազոտություններ արդյունավետ են համարում 4 հոգանոց խմբերը, մինչ ուրիշ հետազոտողները՝ 6 հոգանոց խմբերը:

Գլուխ 2

Նախագծային ուսումնառություն. նկատառումներ պատմություն առարկայի ուսումնառության համար

Ինչպես նշվեց, նախագծային ուսումնառությունն օգնում է աշակերտներին առանցքային գիտելիքներ ու հմտություններ զարգացնել: Նախագծային պատմական ուսումնառության հիմնական նպատակը պատմական ակտիվ, բազմատեսանկյուն մտածողության հմտությունների զարգացումն ու բովանդակային գիտելիքի կառուցումն է:

Պատմական ակտիվ մտածողության հայեցակարգը սկիզբ է առել 1970-ականների վերջում՝ Անգլիայում, ԱՄՆ-ում, Կանադայում, և Գերմանիայում, իսկ վերջին երեսուն տարվա ընթացում տարածվել է միջազգայնորեն : Այս պահին ոլորտը՝ իր հիմնական ջատագովներով, ունի մի քանի տասնյակ հետազոտողներ, այն ուսումնասիրող գիտական հրատարակություններ և կազմակերպություններ: Ըստ պատմական ակտիվ մտածողության հայեցակարգի՝ պատմական մտածողություն զարգացնելու համար աշակերտները պետք է կարողանան պատմական նշանակություն սահմանել, առաջնային վկայություններ կիրառել, շարունակականություն և փոփոխություն առանձնացնել, վերլուծել պատճառներ և հետևանքներ, պատմական ապրումակցում զարգացնել, և պատմական մեկնաբանությունների էթիկական հարթությունը հասկանալ :

2.1 Պատմություն առարկայի նախագծային ուսումնառության ռեսուրսներ

Պատմություն առարկայի նախագծային ուսումնառության առաջնային ռեսուրս են համարվում գրավոր աղբյուրային նյութերը:

Աղբյուրային նյութերը տվյալ ժամանակահատվածում ստեղծված վկայություններ են՝ առարկաներ, փաստաթղթեր, թերթեր, և այլն: Դրանք տարբերվում են երկրորդային աղբյուրներից, որոնք տվյալ ժամանակից հեռու, սակայն այդ ժամանակի մասին պատմող կամ վերլուծող վկայություններ են:

Աղբյուրային նյութերի հետ աշխատելիս կարևոր է՝

1. Աջակցել աշակերտներին, որ քննեն նյութի հնարավորինս ողջ մանրամասները տալով մի շարք հարցեր, ինչպես.
    - Ի՞նչ կարելի է նկատել ուշադիր ուսումնասիրելիս:
    - Ու՞մ կամ ի՞նչ դիտանկյուն է ներկայացնում աղբյուրը:
    - Ու՞մ կամ ի՞նչ դիտանկյուն է բաց թողնում աղբյուրը. Օրինակ կանանց ու տղամարդկանց դերերի վերաբերյալ ինչ ընկալումներ կան:
    - Տեքստից բացի ինչ կարելի է տեսնել, օրինակ՝ նկարներ կամ նախշեր: Ինչպե՞ս է այդ ամենը տեղակայված էջի վրա: Ի՞նչ կարող են դրանք նշանակել:

- Տեքստն ինչ կառուցվածք ունի, կա՞ն տարօրինակ կամ անծանոթ բառեր:
- Կա՞ բան, որ աննշան է թվում: Ինչու՞:

2. Խթանել աշակերտներին նյութի մասին վարկածներ առաջ քաշել և ստուգել՝ հարցնելով.
    - Նյութը որտեղի՞ց է եկել, ո՞վ է ստեղծել:
    - Նյութի ստեղծման ժամանակ ի՞նչ էր տեղի ունենում. ի՞նչ տնտեսական, անվտանգային, մշակութային իրավիճակ էր:
    - Նյութի համար նախատեսված լսարանը ո՞րն էր:
    - Նյութը ստեղծելու համար ի՞նչ գործիքներ են կիրառվել:
    - Ինչո՞ւ է նյութը կարևոր:
    - Եթե նյութը ստեղծեին այսօր, ի՞նչը կտարբերվեր:
3. Օգնել աշակերտներին համեմատել իրար հետ կապ ունեցող տարբեր վկայություններ փորձելով բացատրել դրանց նմանություններն ու տարբերությունները:
4. Օգնել քննել ավելին.
    - Ուրիշ ի՞նչ տեղեկության կարիք կա և ինչպե՞ս կարելի է դա գտնել:
    - Ինչպե՞ս են ուսումնասիրած վկայություններն ու իրերը վերահաստատում կամ հարցականի տակ դնում տվյալ թեմայի մասին արդեն ունեցած տեղեկությունն ու ընկալումը:

Հատկապես երկրորդային աղբյուրների պարագայում կարևոր է քննարկել նաև հետևյալ հարցերը՝

- Ո՞րն է տեքստի հեղինակ(ներ)ի տեսակետը: Ի՞նչ գիտենք հեղինակների մասին, ինչպե՞ս կարող է հեղինակի միջավայրը, սոցիալ-տնտեսական պայմանները, ձգտումները կամ շահերն ազդել նրա վերլուծության վրա:
    - Ու՞մ կամ ի՞նչ դիտանկյուն է ներկայացնում աղբյուրը:
    - Ու՞մ կամ ի՞նչ դիտանկյուն է բաց թողնում աղբյուրը. Օրինակ կանանց ու տղամարդկանց դերերի վերաբերյալ ինչ ընկալումներ կան:

Տեսողական մեծ ծավալ ունեցող վկայությունների պարագայում կարելի է քննարկել հետևյալ հարցերը՝

- Ինչո՞ւ է այս պատկերը ստեղծվել:
- Ի՞նչ է տեղի ունենում պատկերում:
- Ե՞րբ է այս պատկերը ստեղծվել:
- Պատկերի համար նախատեսված լսարանը ո՞րն էր:

- Ի՞նչ գործիքներով է այս պատկերը ստեղծվել:
- Եթե պատկերը ստեղծեին այսօր, ի՞նչը կտարբերվեր:
- Ի՞նչն է բացակայում այս պատկերից:

2.2 Նախագծային աշխատանք

Թեմա՝ «19-րդ դարի Օսմանյան կայսրության հայկական վիլայեթներից հայերի պանդխտության ի՞նչ փորձառություններ կան»

Նախագծի նպատակը

- Օգնել սովորողներին կազմել սեփական բազմատեսանկյուն վերլուծական պատկերացումը 19-րդ դարի Օսմանյան կայսրության հայկական վիլայեթների հայերի պանդխտության փորձառությունների վերաբերյալ:

Օգնել սովորողներին զարգացնել ինքնուրույն թիմային և անհատական աշխատանքի, ուսումնասիրելու, ծրագրային համակարգման հմտություններ: Օգնել սովորողներին զարգացնել ինքնուրույն թիմային և անհատական աշխատանքի, ուսումնասիրելու, ծրագրային համակարգման հմտություններ

Նախագծային ուսումնառության արդյունքում ստեղծվող նյութը (արդյունքը)

Պատմական հուշարձանի նախագիծ

1. Ինքնուրույն թիմային և անհատական աշխատանքով կազմել ուսումնասիրության ծրագիր՝
   - որոշել անհրաժեշտ տեղեկության բնույթը, այն փնտրելու միջոցը, փնտրել և գտնել տեղեկությունը, պարզել դրա վստահելիությունը,
   - համակարգել և համադրել տեղեկությունները այնպես, որ դրանք ներկայացնեն 19-րդ դարի Օսմանյան կայսրության հայկական վիլայեթների հայերի պանդխտությունը պայմանավորող գործոնները,
   - վերլուծել 19-րդ դարի Օսմանյան կայսրության հայկական վիլայեթների հայերի պանդխտության փորձառությունները կանանց և տղամարդկանց տեսանկյունից:

Կազմել հուշարձան որ կներկայացնի ծրագրի հետազոտության հարցի շուրջ թիմի դիրքորոշումը:

Նախագծի թեմայի համապատասխանությունը առարկայական չափորոշիչներին և ծրագրերին

1. **«Հայոց պատմության»**[1] **օրինակելի ծրագիր՝ 8-րդ դասարան**
   - Թեմա 4. «Հայ ժողովուրդը և Հայաստանը XIX-րդ դարում» (18 ժամ)՝
     - Հայաստանի սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական կացությունը Ռուսական և Օսմանյան կայսրությունների կազմում XIX-րդ երկրորդ կեսի և XX-րդ դարի սկզբին:
     - Արևելահայերի և արևմտահայերի առօրյա կյանքն ու կենցաղը, հասարակական հարաբերությունները XIX-րդ դարում և XX-րդ դարի սկզբում: սկզբում:

Նախագծի կապը պատմական ակտիվ մտածողության սկզբունքների հետ

1. Պատմական հեռանկար,
2. Պատճառ և հետևանք,
3. Վկայություն:

Նախագծի կրթական ռեսուրսները՝

«Պատմություն#5» ռեսուրսատուփ՝

– Պանդխտության նկարագրերի աղբյուրային կերպարային քարտեր

Լրացուցիչ նյութեր՝

Հղումը՝ https://www.houshamadyan.org/fileadmin/houshamadyan/images/content_images/Istanbul_vilayet/Locale/Daniel_ohanian/zip_files_new/2_migrants_1830s-1880s.zip

Նյութեր բեռնելու համար՝ http://haygirk.nla.am/

Նախագծային ուսումնառության արդյունքում ստեղծվող նյութը (արդյունքը)

Պատմական հուշարձանի նախագիծ

Նախագիծը իրականացվել է ութերորդ դասարանի աշակերտների կողմից ձևավորված չորս խմբերում:

Նախագծի շուրջ աշխատանքը բաղկացած է եղել երկու զուգահեռ փուլերից.

[1]

1. Ուսուցչի հետ դեմ առ դեմ (դասարանային հանդիպումներ)
2. Ինքնուրույն խմբային աշխատանք՝ հիմնական դասաժամերից դուրս
   Սովորողների միջև կատարել ենք աշխատանքի բաշխում՝ գրավոր սկզբնաղբյուրների, <<Պատմություն#5 ռեսուսատուփ>>-ի քարտերով:
   Հանդիպումների ընթացքում քննարկել ենք առաջացած խնդիրները, տվել սպառիչ պատասխաններ և ցուցումներ:

Նախագիծը տևեց 5 շաբաթ:Ավարտին աշխատանքները ամփոփվեցին Նախագծերի հանրային ներկայացմամբ,որի ընթացքում յուրաքանչյուր խումբ ներկայացրեց իր հուշարձանը այցելուներին: Ընթացքում սահիկաշարի միջոցով խմբերը անդրադարձան կատարված ուսումնասիրությանը, ներկայացրեցին այն հետազոտական հարցերը, որոնց փորձել են պատասխանել:

Հատկապես, ուզում եմ ընդգծել այն, որ սովորողները իրենց հանձնարարված գրավոր սկզբնաղբյուրներն ուսումնասիրելու ընթացքում, հաճախ առերեսվում էին այնպիսի փաստերի և վկայությունների, որոնք նրանց մղում էին լրացուցիչ ուսումնսիրությունների իրենց հետաքրքրությունները բավարարելու նպատակով, թեպետ դրանք առանցքային որևէ նշանակություն չունեին կոնկրետ վերջնարդյունքին հասնելու տեսանկյունից: Պատմության նկատմամբ հետաքրքրությունների մեծացմանը նպաստեց նաև այն հանգամանքը, երբ սովորողների պատմական հուշարձան ստեղծելու ստեղծագործական հմտությունները զարգացնելու նպատակով, ներկայացրի տարբեր օրինակներ, նմուշներ, դրանց ստեղծման շարժառիթները, պատմությունները: Սովորողները այնպես էին կլանված լսում, վերլուծում, անգամ նրանցից ոմանք կարծիք հայտնեցին, որ միգուցե, հետագայում շարունակեն զբաղվել պատմության ուսումնասիրմամբ:

Եզրակացություն

Նախագծային աշխատանքը հետաքրքիր է, օգտակար և հեռանկարային, եթե ճիշտ է ընտրված թեման՝ հաշվի առնելով սովորողների նախասիրությունները և տարիքային առանձնահատկությունները: Միաժամանակ, կախված աշխատանքի ծավալից, անհրաժեշտ է ճիշտ հաշվարկել ժամանակը:

Նախագծային աշխատանքի իրականացումը արդյունավետ է, երբ խմբում կան 4-6 սովորող: Այս դեպքում աշխատանքը վերահսկելի , կոնկրետ, նպատակային ու տեսանելի է: Այն հնարավորություն է տալիս ունենալու ստեղծագործ, որոնող աշակերտ և անընդհատ կարդացող-մտածող-սովորող ուսուցիչ: Սովորողի աշխատանքն ինքին կարևոր է և գնահատելի, թափած ջանքերը՝ ուշադրության արժանի:

Աշխատանքի ընթացքում սովորում են. նախագծային աշխատանքը հենց սովորելու գործնական հնարավորություն է: Հնարավորություն, որը կարող է տանել դեպի նոր բացահայտումներ: Նախագծային ուսումնառությունն օգնում է աշակերտներին առանցքային գիտելիքներ ու հմտություններ զարգացնել: Նախագծային պատմական ուսումնառության հիմնական նպատակը պատմական ակտիվ, բազմատեսանկյուն մտածողության հմտությունների զարգացումն ու բովանդակային գիտելիքի կառուցումն է:

Այս մեթոդի հիմնական նպատակն է սովորողներին տալ հնարավորություն գործնական խնդիրների կամ առաջադրանքների լուծման գործընթացում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ՝ տարբեր առարկաներից գիտելիքների ինտեգրման միջոցով:

Պատմությունը սերնդի կրթության ու դաստիարակության գործում աշխարհայացքային և ընդհանուր մշակույթային կարևոր դերակատարում ունենալուց բացի, կոչված է սովորողների վարքին ուղղություն տալուն, քաղաքագիտական, դիվանագիտական հմտություններ և կարողություններ զարգացնելուն, համամարդկային և ազգային մշակութային արժեքներին հաղորդվելուն:

Նախագծային մեթոդը պատմության դասերին հատկապես կարևոր է քննադատական, ստեղծագործական հմտությունները, երևույթների պատճառահետևանքային կապերը վեր հանելու, երևույթների հետ ինքնուրույն

ծանոթանալու համար: Սովորողը պետք է կարողանա քաղաքական կամ հասարակական որևէ երևույթի օրինակով վեր հանել պատմական իրադարձությունների օրինաչափությունները:Կարևոր է փաստարկված, ինքնուրույն դատողությունների, կենդանի խոսքի ներկայացումը, նյութական արդյունքի ստեղծումը: Նախագծային աշխատանքը հետաքրքիր է նաև նրանով, որ ընդհանուր գործ կատարելիս սովորողներն էլ ավելի են մտերմանում, փորձում են օգտակար լինել իրար, ընկերանում են, իրար ուսումնասիրում-բացահայտում են, իրարից սովորում են, գնահատում են «ընկերություն» կոչվածը, հասկանում են դրա առավելությունները:

Այսպիսով՝ ՝ նախագծի վրա աշխատելու ընթացքում առավել ցայտուն են դառնում սովորողի ունակությունները, հմտություններն ու կարողությունները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մովսիսյան Ն., Ուսուցման նախագծային մեթոդ, Մխիթար Սեբաստացի կրթահամալիր , , Մանկավարժական հանդես 2013թ

2. Սարգսյան Ե., Նախագծերը ուսուցման արդյունավետ միջոց, Մխիթար Սեբաստացի կրթահամալիր, Մանկավարժական հանդես, 2013թ
3. movsisyanhripsime.pdf (vsu.am)
4. Ի՞նչ է "Նախագծային ուսուցումը" (kznakbnagavar.blogspot.com)

5. Նախագծային ուսուցում. այլոց փորձի ուսումնասիրում | ganjalyanyura (wordpress.com)
6. «Պարադիգմա» կրթական հիմնադրամ << ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ#5 Նախագծային ուսումնառություն>> ծրագրի ուղեցույց

7. Նախագծային ուսուցում. Ալեքսանդր Շագաֆյան (Կրթություն ամենուր և բոլորին) - :Բուն TV (boon.am)